



# Տեղեկագիր հոկտեմբեր 2019



0 5 10 20 30 40 Miles


ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2019թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում I խմբի միկրոօրգանիզմներով հարուցված, հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող հիվանդություններ, դեպքեր չեն արձանագրվել:

## Հատուկ վտանգավոր վարակներ

### Բրուցելյոզ



**Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետությունում 2019-2018 թթ հունվարից-սեպտեմբեր ժամանակահատվածում արձանագրված բրուցելյոզի դեպքերը**

Ըստ գծապատկեր 1-ի՝ հանրապետությունում 2019թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում արձանագրված բրուցելյոզ հիվանդության դեպքերի թիվը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1.3 անգամ, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ աճել 1.5 անգամ:


2019թ. հոկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է բրուցելյոզի 20 դեպք, որից 2-ը՝ Երևան քաղաքում, 4-ը՝ Գեղարքունիքի, 4-ը՝ Արագածոտնի, 3-ը՝ Լոռու, 1-ը՝ Արարատի, 2-ը՝ Սյունիքի, 2-ը՝ Արմավիրի, 2-ը՝ Կոտայքի մարզում: Յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկատվություն է տրամադրվել ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ կենդանիների շրջանում համապատասխան միջոցառումներ կազմակերպելու նպատակով:

## Օդակաթիլային վարակներ

### Գրիպ և Սուր շնչառական վարակ

2019թ. հոկտեմբեր ամսին Հայաստանի Հանրապետության տարածքում արձանագրվել է սուր շնչառական վարակներով՝ (այսուհետ ՍՇՎ), պայմանավորված

հիվանդացության ցածր ակտիվություն: ՄՇԿ դեպքերը Նախորդ ամսվա համեմատ աճել են՝ 1.6 անգամ: Ընդհանուր դեպքերի գրեթե 60%-ը կազմում են 0-4 տարեկան երեխաները: 2019 թվականի սեպտեմբեր ամսվա ընդհանուր ցուցանիշը 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է՝ 1.2 անգամ, 2017 թվականի համեմատ՝ 1.3 անգամ:




**Գծապատկեր 2.2018-2019 թթ. հոկտեմբեր – հոկտեմբեր ամիսների ընթացքում արձանագրված սուր շնչառական վարակների հիվանդացության ցուցանիշն ըստ 100.000 բնակչի**

Հոկտեմբերի ընթացքում գրիպի դեռքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում, գրիպանման հիվանդություններից և ծանր սուր շնչառական վարակներից հետազոտվել է 130 նմուշ: Լաբորատոր հետազոտության արդյունքում հայտնաբերվել է ադենովիրուսի 5 դեպք, պարագրիպի 27 դեպք, ռինովիրուսի 15 դեպք, բոկավիրուսի 5 դեպք, մետապնևմովիրուսի 1 դեպք: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել են ռինովիրուսի 26, բոկավիրուսի 1, ադենովիրուսի 1, պարագրիպի 1, ռինովիրուս+ բոկավիրուսի 1 դեպք:

## **Այլ օդակաթիլային վարակներ**

### **Ջրծառիկ**




**Պճապատկեր 3. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ հունվար-հոկտեմբեր ամիսներին արձանագրված ջրծաղկի դեպքերը**

2019թ. հոկտեմբեր ամսին արձանագրված ջրծաղկի դեպքերի թիվը նախորդ ամսվա համեմատ աճել է 2.5 անգամ, իսկ 2018թ նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2 .1 անգամ: Ընդհանուր առմամբ դեպքերի 80% արձանագրվել է 0-18 տարեկանների շրջանում, մասնավորապես՝ 3-6 տարեկանների շրջանում՝ 56%: Առավել շատ դեպքեր արձանագրվել են քաղաքաբնակ բնակչության շրջանում՝ 78%, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Ինչ վերաբերում է ջրծաղկի տարածվածությունը հանրապետությունում, ապա առավել շատ դեպքեր արձանագրվել են Երևանում, Լոռու, Գեղարքունիքի և Կոտայքի մարզում: Նշված ժամանակահատվածում հղիների շրջանում արձանագրվել է ջրծաղկի 1 դեպք, որի մասին տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ԱՆ մոր և մանկան վարչություն:

Ընտանեկան և կազմակերպ օջախներում հնարավորության սահմաններում առաջին դեպքերը մեկուսացվում են և հսկողություն է սահմանվում հիվանդի հետ շփված երեխաների նկատմամբ:


**Քուլթեշ**



**Գծապատկեր 4. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ. հունվար-հոկտեմբեր ամիսներին արձանագրված քուրթեշի դեպքերը**

Ըստ գծապատկեր 4-ի՝ քուրթեշի դեպքերի թիվը նախորդ ամսվա համեմատ աճել է 1.7 անգամ, 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.4 անգամ: Առավել շատ դեպքեր արձանագրվել են 3-6 տարեկան երեխաների շրջանում, ինչը կազմում է արձանագրված դեպքերի ընդհանուր թվի 78.6%-ը: Դեպքերի մեծ մասը արձանագրվել է քաղաքաբնակ բնակչության շրջանում՝ 54.2%, որտեղ առկա են պայմաններ մարդկանց ավելի սերտ շփման համար: Բոլոր դեպքերն ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության, որի նպատակն է հնարավոր վարակի աղբյուր հանդիսացող հիվանդության ջնջված ձևերով հիվանդների հայտնաբերումը, կանխելով վարակի հետագա տարածումը:

**Վարակային մոնոնուկլեոզ**




**Գծապատկեր 5. Հայաստանի Հանրապետությունում 2018 և 2019 թթ. հունվար-հունվար ամիսներին արձանագրված վարակային մոնոնուկլեոզի դեպքերը**

Ըստ գծապատկեր 5-ի՝ 2019թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում արձանագրված վարակային մոնոնուկլեոզով պայմանավորված հիվանդության դեպքերի թիվը համեմատած նախորդ ամսվա հետ աճել է՝ 1.2 անգամ, իսկ նախորդ տարվա նույն

Ժամանակահատված համեմատ ևս՝ 1.2 անգամ: Հոկտեմբեր ամսվա ընթացքում արձանագրվել է մոնոնուկլեոզի 43 դեպք, որից 36-ը՝ արձանագրվել է 0-18 տարեկան երեխաների շրջանում:

### **Աղիքային վարակիչ հիվանդություններ**

2019թ. հոկտեմբեր ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների 1168 դեպք, որից 408 դեպքն արձանագրվել է Երևան քաղաքում, 760-ը՝ մարզերում: 2018 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան աճել է: Հունվար – հոկտեմբեր ամիսների ընթացքում աղիքային վարակներով հիվանդացությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աննշան նվազել է:



**Գծապատկեր 6. Աղիքային վարակների հիվանդացությունը 2018-2019թթ. հունվար–հոկտեմբեր ամիսներին ըստ 100.000 բնակչի**

2019թ. սեպտեմբեր ամսվա համեմատ (1205 դեպք) աղիքային վարակներով հիվանդացությունը աննշան նվազել է:

Արձանագրված աղիքային վարակիչ հիվանդությունների օջախներում իրականացվել են համաճարակաբանական հետազոտություններ և հակահամաճարակային միջոցառումներ՝ վարակի հետագա տարածումը և բռնկումների առաջացումը կանխարգելելու նպատակով:

Հայաստանի Հանրապետությունում 2019թ. հոկտեմբերի 13-ից 18-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքի Հոգեկան պահպանության ազգային կենտրոնի հիվանդների շրջանում արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկում, որի ժամանակ հիվանդացել է 33 մարդ: Բռնկման հետազոտության ընթացքում հիվանդների և կենտրոնի աշխատակիցների կղանքի լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է շիգելա և ախտածին

աղիքային ցուպիկ: Միաժամանակ շիգելա և ախտածին աղիքային ցուպիկ է հայտնաբերվել նաև կենտրոնից վերցված սննդամթերքի նմուշներում:

Բռնկման հավանական պատճառ համարվել է Զոգեկան պահպանության ազգային կենտրոնի հիվանդներին տրվող սննդամթերքի երկրորդային աղտոտումը, իսկ վարակի աղբյուրը՝ կենտրոնի աշխատակիցները, որոնց մոտ հայտնաբերվել են աղիքային վարակների հարուցիչներ:

### **Իմունականիսարգելում**

Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով իրավիճակը բարենպաստ է: 2019թ. հոկտեմբեր ամսին հանրապետությունում գրանցվել է կարմրուկի 2 բերովի դեպք (Ռուսաստանի դաշտությունից), կապույտ և հարկապույտ հազի 4 դեպք՝ չպատվաստած և թերի պատվաստված անձանց շրջանում:

1 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը սեպտեմբեր ամսին կազմել է 90% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 2 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 92% (նպատակային ցուցանիշը՝ 90%): 7 տարեկան երեխաների շրջանում պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 96% (նպատակային ցուցանիշը՝ 90%):

Բնակչության շրջանում պատվաստումներում ընդգրկվածության բարձր ցուցանիշների շարունակական ապահովումը կնպաստի հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով բարենպաստ համաճարակային իրավիճակի պահպանմանը:

### **Վիրուսային հեպատիտներ**

Հայաստանի Հանրապետությունում հոկտեմբեր ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը աճել է 2 անգամ:

Սույն թվականի հոկտեմբեր ամսին արձանագրվել է սուր վիրուսային հեպատիտի 8 դեպք: Վարակման հավանական ուղիները և պատճառներն են՝ 4՝ ինվազիվ միջամտություն (բժշկական և ոչ բժշկական), 1՝ սեռական ճանապարհ, 3՝ անհայտ:

### **Քիմիական թունավորումներ**

Հայաստանի Հանրապետությունում հոկտեմբեր ամսվա ընթացքում արձանագրված քիմիական թունավորումների 41.7%-ը գրանցվել է Երևան քաղաքում,

իսկ 58.3%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը 30%-ը՝ առաջացել է դեղամիջոցներով թունավորումներից՝ ինքնասպանության, գերդոզավորման և ծնողի անուշադրության հետևանքով, 25.1%-ը՝ ավիոհուլային թունավորումներից՝ ավիոհովի բարձր չափաբաժինների ընդունման հետևանքով, 19.8%-ը՝ օրգանական լուծիչներից, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 9.6%-ը թունավոր կենդանիների խայթոցից, 8%-ն՝ օճառների և վացող նյութերի թունավոր ազդեցությունից, 2.7%-ը՝ թունաքիմիկատներից, 2.7%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից, 2.1%-ը խոտաբույսերից:

2019թ. հոկտեմբեր ամիսը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը աճել է 1.3 անգամ:

## ***Մակարուծային հիվանդություններ***

### **Մալարիա**

2019թ. հոկտեմբեր ամսին մալարիայի համաճարակային իրավիճակը հանգիստ էր, մալարիայի բերովի դեպքեր չեն արձանագրվել:

### **Լեյշմանիոզ**

2019թ. հոկտեմբերին արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 1 դեպք՝ Սյունիքի մարզի ք.Կապանից:

### **Լայմի հիվանդություն**

2019թ. հոկտեմբերին գրանցվել է Լայմի հիվանդության 3 դեպք՝ 1-ը Սյունիքի, 2-ը՝ Լոռու մարզից:

## ***Սննդային թունավորումներ***

Հանրապետության տարածքում հոկտեմբեր ամսին արձանագրվել է սննդային թունավորման 5 դեպք՝ 11 տուժածով, որից սնկից թունավորման 2 դեպք՝ որից 1 դեպք 4 տուժածով և 1 դեպք՝ 3 տուժածով, ինչպես նաև սննդային տոկսիկոինֆեկցիայի 1 դեպք՝ 2 տուժածով: 0-14 տարեկան երեխաների շրջանում սննդային թունավորման դեպքեր չեն արձանագրվել: Թունավորման դեպքերն արձանագրվել են Արարատի, Կոտայքի, Սյունիքի և Լոռու մարզում: Սնկից թունավորման պատճառ է հանդիսացել տուժածների կողմից հավաքած սունկը: Սննդային թունավորման դեպքերի վերջնական ախտորոշումը դրվել է համաճարակաբանական տվյալների և կլինիկական նշանների հիման վրա:

Սննդային թունավորման դեպքերի կանխարգելման նպատակով օջախներում իրականացվել է բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում՝ սննդային թունավորումների



առաջացման պատճառների, կանխարգելման հիմնական սկզբունքների վերաբերյալ: Սննդային թունավորումների կանխարգելման վերաբերյալ, բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով, տարբեր լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվում է քարոզչություն:

Կատարող՝ Աննա Աղաջանյան  
ԱՆ «ՀԿԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ